Մուաւիայ ուղարկեց Հաբիբ Ի. Մասլամայ Ֆիհրիին եւ Սաֆվան Ի. Մուաթթալ Սուլամիին, որոնք մի քանի օրւայ ընթացքում նուաճեցին քաղաքը Ուռհայի խաղաղութեան հիման վերայ. Մուաւիայ դրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա վախճանեցաւ Մուաւիայի խալիֆութեան ժամանակ (661—680)։ Այլք կը պնդեն սակայն, թէ ինքն Մուաւիայ արշաւեց Աշմուշատի վերայ երկու զօրապետների հետ միասին եւ դրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա մնաց մինչեւ իւր մահը։ Կը պատմեն, թէ Կոստանդին կայսրը՝ Մալաթիայում իջեւանելուց յետ՝ բանակեցաւ Աշմուշատի հանդէպ 133 թ., բայց չկարողացաւ ոչինչ անել, այլ միայն ասպատակեց շրջակայքը եւ վերադարձաւ։ Հաբիբ Ի. Մասլամայ Աշմուշատ առնելուց յետ յարձակեցաւ Կամխ ամրոցի վերայ, բայց չկարողացաւ ազդել. նոյնպէս եւ Սաֆվան նորանից յետոյ։ 188 թ. Մուհամմեդ Ի. Աբդուլլահ Ի. Աբդուլռահման Ի. Աբի Ամռայ Անսարի, որին Աբդուլմալիք Ի. Սալհ նշանակած էր կառավարիչ Աշմուշատի վերայ, յարձակեցաւ Կամխի վերայ եւ առաւ ամրոցը։ Աբդուլլահ Ի. Թահիր նուաճեց Կամխ Մամունի խալիֆութեան ժամանակ, որ մնաց մուսլիմների ձեռքում։ Աշմուշատի եւ Կարինի քրիստոնեայ բնակիչք, որպէս եւ Բագրատ որդի Աշոտի, Խլաթի իշխանն, կը խորհէին անցնել Յունաց կողմը եւ կը խնդրէին նոցա օգնութիւն՝ Աշմուշատի գաւառում նոցա պատկանող հողերի համար։

Իյադ Ի. Ղանմ ուղարկեց Հաբիբ Ի. Մասլամայ Ֆիհրիին Աշմուշատից Մալաթիայ, որ նա գրաւեց. ապա բնակիչք փակեցին (նորա առջեւ) քաղաքի դռները։ Երբ Մուաւիայ կառավարիչ եղաւ Ասորիքի եւ Միջագետաց վերայ, նա ուղարկեց Հաբիբ Ի. Մասլամային, որ նուաճեց Մալաթիայ բռնութեամբ։